որք ձգեն նորա, որք կան ի յարեւելս, ոչ այլ ինչ, եթէ ոչ վասն անիրաւ մամոնայի, զի այնու լցուսցեն զափս իւրեանց: Ուստի առ այս ասեմք, զի ահա ազգ մեր փչացաւ, եւ ի մոխիր դարձաւ պատճառաւ տուժեցմանց, որ վասն այսմ, զոր տէր ինքն ողորմեսցի:

Վասն իններորդին:

Ի գնալն ուղղափառաց ի յեկեղեցիս Հայոց ոչ ուղղափառաց. ուղղափառաց Հայոց անհնար է, թէ կարիցեն առնել բանս ինչ ուղղափառապէս. զի ըստ գիտմանս մերոյ ասեմք զայս, զի Հայք որք են ոչ ուղղափառք, թողուցուն առնել ուղղափառապէս. քանզի ոչ ի խոստովանութիւնս, եւ ոչ ի պատարագելն ուղղափառապէս. եւ զի թէպէտ վասն երթեւեկութեանց նոցին լռեն, որ զայս ի սակաւ ժամանակս. այլ՝ զկնի խնդրեն զդաւանութիւնս հաւատոյ, եւ վասն ոչ ընդունելոյ զերկու բնութիւնս, այլ զմի բնութիւն, եւ տալ նզովել զժողովն քաղկեդոնի, եւ զայլն որ ընդ նմին: Որոց նախկին քաջութիւն եւ մեծագործութիւն այն է, զի խստանայցեն ի վերայ ուղղափառաց, եւ զցասումն օր ի վերայ (աւուր) սաստկացուսցեն: Վասն որոյ եթէ առ այս գլխաւորքն Հայոց վասն հաստատութեան ուխտի եւ պայմանի իմիք գիրս եւս տայցեն, ոչ է յուսալի բանից եւ գրոց նոցա. վասն զի հասարակութիւնք եւ խառնիճաղանճք նոցին ոչ դադարին եւ ոչ ի յետս մնան ի չար արարմանց իւրեանց, զորոց զփորձն առեալ, եւ զբաժակ դառնութեան արբեալս եմք, եւ ի բազում տեսեալ զբարիբարոյութիւն բարուց նոցա:

Վասն տասներորդին:

Այս բանս եւ փունթս քան զամենայն դժուարս երեւի, որ տայցեն թոյլ Հայքն ոչ ուղ-